# Արձանագրություն N 2

## «Թ4ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի բացման նիստի

հայտերի բացման նիստի օր՝ 29. Մայիսի 2026թ.
հայտերի բացման նիստի ժամ՝ 12:15

Պատվիրատուի անվանումը ՝ <<Թիվ 4 պոլիկլինիկա>> ՓԲԸ
Գտնվելու վայրը ՝ ք. Երևան, Մոսկովյան 13
Մասնակցում էին՝ Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Զ. Հովհաննիսյան, Լ, Ալեքսանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Գևորգյան

### *1. Տեղեկատվություն գնման ընթացակարգի հայտերի բացման մասին*
### *(Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան )*

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ Գնման ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվել է *21.մայիսի2026թ.* և հայտերի ներկայացման վերջնաժամկետն էր սահմանվել *29.մայիսի.2026թ. ժամը՝ 12:15*

բ/ Հրավերի I-ին Մասի 4-րդ կետի և II-րդ Մասի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում *հայտեր են ներկայացրել թվով << 1 >> կազմակերպություն՝*

| հ/հ | Մասնակից | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանում | ՀՎՀՀ | Հասցե | Էլ. հասցե | Հեռախոսահամար |
| 1 | Ս և Գ գրուպ ՍՊԸ | 01373911 | Ք. Երևան, Սեբաստիա 198 | adamyanerem@yahoo.com | 099-70,20,34 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

### *2. Գնման ընթացակարգի ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին*
### *(Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան )*

2.1 Հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտ չի ներկայացվել:

2.2 Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին նախնական տվյալներով.

*- համապատասխանում է* «Ս և Գ գրուպ » ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

### *3. Գնման ընթացակարգի յուրաքանչյուր մասնակցի ծրարով ներկայացրած փաստաթղթերի համապատասխանության մասին*
### *(Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան )*

3.1 Յուրաքանչյուր կազմակերպության կողմից ծրարով ներկայացված հայտում առկա են հետևյալ փաստաթղթերը

| Հավելվածներ | Հայտով առկա փաստաթղթերի առկայություն | Կազմակերպության անվանում |
|---|---|---|
| | | Ս և Գ գրուպ ՍՊԸ |
| Հավելված N1 | Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն | առկա է |

| | | |
|---|---|---|
| Հավելված N1.1 | Նկարագիր՝ առաջարկվող ապրանքի | առկա է |
| Հավելված N1.2 | Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի | առկա է |
| Հավելված N2 | Գնային առաջարկ | առկա է |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

*4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.*

*(Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան )*

4.Գնման ընթացակարգի իրավերով սահմանված ժամկետներում հնարավոր մասնակիցների կողմից հարցում կամ պարզաբանում չի ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

*5. Մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները*

*(Հանձնաժողովի նախագահ՝ Ջ. Հովհաննիսյան )*

| Չափաբաժնի համար | Անվանում | Նախահաշ-վային արժեք | Պայմանագրային գինը ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/ | |
|---|---|---|---|---|
| | | | Ս և Գ գրուպ ՍՊԸ | |
| | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ ներառ. |
| 1 | Համակարգիչ | 1000000.00 | 1041666.67 | 1250000.00 |
| 2 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 45000 | | |
| 3 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 210000 | | |

*6. Բացման և գնահատման նիստը ընդհատելու մասին*

*(Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան )*

6.1. Ընդունել ի գիտություն,

*6.1.1 Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցներին՝*

ա/ Արդյունքների գնահատմամ համար գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված հայտերի ուսումնասիրման և գնահատման համար բացման նիստը ընդհատել մինչև բանակցությունների ավարտը և հայտերի վերջնական գնահատումը, բայց ոչ ուշ քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացում:

բ/ Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 13.10.2022թ.N 1593-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետի, այն է՝

*6) եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հրավերի պահանջներին բավարար է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ,»,*

Համաձայն վերոգրյալի << 1 >> չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին ճանաչել հաղթող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ------------------------------ | Ն. Դավթյան |
| Անդամներ | ------------------------------ | Զ. Հովհաննիսյան |
| Անդամներ | ------------------------------ | Լ. Ալեքսանյան |
| Քարտուղար | ------------------------------ | Հ. Գևորգյան |